Բացի ախունդի կրօնական աւենից, ուր հաստատւում են ամուսնական կապերը և լինում են կրօնական վարդապետութիւնները, կառավարութեան միմիայն պաշտօնատունը խանի «դիւան-խանան» է։ Դա ծառայում է խանին իբրև դահլիճ, ուր ժողովւում են և ընդունվում են ամեն տեսակ հիւրեր, իբրև սեղանատուն, ուր անուշ են անում «բողբաշն ու փլաւը», իբրև ննջարան, որ ծառայում է միայն ճանապարհորդ հիւրերին, իբրև աղօթարան, ուր կատարում են «նամազը», միանգամայն և իբրև դատարան, գինուորական, ատմինիստրական, և կառավարութեան բոլոր գործերի անգիր պաշտօնատուն։ Մի խանութեան մէջ այսպիսի տներ, որոնք թէև տեսակով մի, բայց թւով շատ են, ինչպէս որ խանի եղբայրները բոլորն էլ խաներ են և իւրեանց ժառանգութիւն ընկած գիւղերի անձնիշխան միակ տէր և դատաւոր են։

Այդ խանութիւնները, թէև ենթարկուած են թագաւորաց թագաւորի իշխանութեանը, բայց թագաւորական գանձարանը նոցանից ոչինչ ուղ-

---

տակին Հանութլու, որոնք արշաւանքի ուղղութիւնը շրջեցին Սալմաստի վերայ։ Ես Կարայնիից երբ վերադառնում էի, լսեցի, որ այդ պատուաւոր գործերով զբաղված խումբը կռվումը կորցնելով մի մարդ եւ մի ձի կորագլուխ յետ էին դարձել։